ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 703-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2003.07.09/36(271) Հոդ.633	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	22.05.2003
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	13.06.2003
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	18.06.2003
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	19.07.2003	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՁԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
18 հունիսի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2003 թվականի N 703-Ն

ՁԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 32-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

1.1. Սահմանել, որ սույն որոշման հավելվածի (այսուհետ՝ հավելված) 6.1-ին կետով նախատեսված չափաքանակների նկատմամբ մոնիթորինգն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի պետական լիազոր մարմինը և Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտի պետական լիազոր մարմինը՝ յուրաքանչյուրն իր մասով:

(1.1-ին կետը լրաց. 29.08.19 N 1148-Ն)

1.2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ ապահովել իրականացվող մոնիթորինգի արդյունքների փոխանակում՝ յուրաքանչյուր 14-18 ամիսը մեկ անգամ՝ արտադրված ապրանքային ձկան և ջրառի ծավալների համադրման նպատակով, ինչպես նաև իրականացվող մոնիթորինգի արդյունքները տրամադրել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

(1.2-րդ կետը լրաց. 29.08.19 N 1148-Ն)

1.3. 1.2-րդ կետի մոնիթորինգի իրականացման ժամկետը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից:

(1.3-րդ կետը լրաց. 15.04.21 N 574-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2003 թ. հունիսի 13
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
մայիսի 22-ի N 703-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՁԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման գործառույթները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացությունն ունի հետևյալ իմաստը՝

ձկնային տնտեսություն՝ արդյունագործական ձկնորսություն, ապրանքային ձկան, ձկնամատղաշի, այլ ջրային կենդանիների բուծման գործունեության իրականացման միջոցառումների և (կամ) կառուցվածքների ամբողջություն:

3. Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսները կարող են օգտագործել Հայաստանի Հանրապետության իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:

4. Ջրային համակարգերն օրենքով սահմանված կարգով կարող են օգտագործվել ձկնատնտեսական նպատակներով՝ դրանց սեփականատիրոջ համաձայնությամբ և պայմանագրային հիմունքներով՝ սույն կարգի 3-րդ կետով սահմանված պայմանի բավարարման դեպքում:

5. Ձկնային տնտեսության կողմից իրականացվող ջրօգտագործումը չպետք է խանգարի կամ խոչընդոտի այլ տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը:

6. Ձկնային տնտեսությունների ջրօգտագործումը պետք է բացառի ստորերկրյա ջրերի մակարդակի փոփոխությունը, տեղանքի ճահճացումը կամ չորացումը:

6.1. Արարատյան դաշտավայրում գործող ձկնաբուծական տնտեսությունների համար սահմանվում են ջրօգտագործման և ձկնարտադրության տարեկան ծավալի հետևյալ չափաքանակները՝

1) 1 լ/վրկ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝ նվազագույնը 700 կգ.

2) 1 լ/վրկ ջրաելքով թառափ ձկնատեսակի համար՝ նվազագույնը 800 կգ.

3) 1 լ/վրկ ջրաելքով թառափ և իշխան ձկնատեսակների համար՝ ընդհանուր նվազագույնը 750 կգ:

(6.1-ին կետը լրաց. 29.08.19 N 1148-Ն, 15.04.21 N 574-Ն)

6.2. Հավելվածի 6.1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված չափաքանակները սույն որոշման 1.2-րդ կետում նշված մոնիթորինգի իրականացման արդյունքում չհամապատասխանելու դեպքում ջրօգտագործման թույլտվության մեջ նվազեցնել ջրառի չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով վերջին հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներով սահմանված տարեկան ձկնազանգվածի համար սույն չափաքանակներով հաշվարկված ջրառի ծավալին:

(6.2-րդ կետը լրաց. 29.08.19 N 1148-Ն, փոփ. 15.04.21 N 574-Ն)

7. Ձկնատնտեսական նշանակության ջրային օբյեկտների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Ձկնատնտեսական նշանակության ջրային օբյեկտներից իրականացվող ջրառը պետք է պարտադիր կահավորված լինի ձկնարգելքով:

9. Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումն առանց արհեստական կառույցների թույլատրվում է միայն տվյալ ջրաէկոհամակարգին բնորոշ ձկնատեսակների բուծման պայմանով:

(հավելվածը լրաց. 29.08.19 N 1148-Ն, լրաց., փոփ. 15.04.21 N 574-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**